

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դիմել 10 բուր, կէս տարվանը 6 բուր:
Ստանձին համարները 5 կողմով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կողմէ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԻՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիայի և Անգլիայի յարաբե-
րութիւնները: Արտաքին լուրեր: ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ: ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ուսուցչական ժողով և կա-
թոլիկ հայեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 9 սեպտեմբերի

Ինչպէս յայտնի է «Մշակ» առաջինն եղաւ
որ յիշեցնէր Թիֆլիսի հասարակութեանը այն բա-
րոյական և քաղաքակրթական պարտքի մասին,
որ նա պիտի կատարէր դէպի ուսուցչական ժո-
ղովը: «Մշակ» ձայնը գտաւ արձագանք Թիֆլի-
սի հասարակութեան մէջ և մեր դպրոցների գոր-
ծին նուիրված համեստ մշակները յարգվեցան ճաշ-
կերոյթով, թատրոնական ձրի ներկայացումնե-
րով և այլն:

Բայց մենք միանգամայն զարմացած ենք մնա-
ցել թէ մեր քաղաքային խորհուրդը, զուգան, իր
վարչութեամբ, մինչև այժմ յարգանքով, կամ օգ-
նութեան մի նշույլ էլ չէ ցոյց տուել մեր քա-
ղաքում Անգլիկոսական և Կաթոլիկ ամեն կողմնե-
րէն ժողոված հայ ուսուցիչներին, ինչպէս այդ
ընդունված է ամեն քաղաքում, երբ առիթ է
ներկայանում նրան հիւրասիրել մի որ և է ժո-
ղով: Մեր քաղաքային վարչութիւնը կարող էր
գոնէ հետեւեալ օգնութիւնն անել մեզ մօտ ե-
կած ուսուցիչներին. այժմ, երբ նրանք արդէն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿ ՀԱՅԵՐ

IV

Աշակերտներից շատերը, որոնք Ալեքսանդրա-
պոլի ուսումնարանից դուրս եկած արժանացել
են քաճանայական պաշտօնին, նրանք գնալով ի-
րանց գիւղերը, նրանցից շատերը մեծ վախազ և
պատրաստակամութիւն են ցոյց տալիս հաստատե-
լու գիւղական հասարակութեան համար ուսումնե-
րանքները, բայց քիչերն են կարողանում իրա-
կանացիելու այն յոյսերը և բարի նպատակները,
որ, առհասարակ ունի մեր գիւղական դասը դէպի
հոգևորականութիւնը: Բացի Ալեքսանդրապոլի ու-
սումնարանից, հայ-կաթոլիկներն ունեն մի քանի
նշանաւոր դպրոցներ, որպիսիք են, Ախալցխայի
ուսումնարանը, որ փոքր ի շատ յարմարեցրած է
մանկավարժական պահանջին և որտեղ սովորում
են երեկոյց. Լոռի դաստի Շահապար գիւղում
կայ մի գիւղական դպրոց. Ալեքսանդրապոլի դա-
ւառի Քալթաթում գիւղում, հայր Պօղ. վ. Նահա-
պետեանը հիմնել է մի գիւղական դպրոց և հրաւի-
րել է Վահանգիսի մի վարդապետի ուսուցչու-
թեան համար: Այդ ուսումնարանը ունի մի գեղե-
ցիկ պարտէզ զանազան պտղատու ծառերով և
բաւականութեամբ, որ արժանի է այս գիւղական
լու ուսումնարան դասնալու: Բայց զրանցից,
կան շատ հայ-կաթոլիկ գիւղական ուսումնարան-
ներ, որոնք միմիայն ձմեռ ժամանակ գոյութիւն
ունեն, իսկ ամառները փակված են, բայց դասա-
տուութեան կանոններով բոլորն էլ միատեսակ են
և որոնց մասին մենք մի փոքր յետոյ կը խօսենք:
Կանանց սեռի կրթութեան գործը, հայ-կաթո-
լիկ հասարակութեան մէջ, բոլորովին մոռացված
մի հարց է, և մենք մինչև այսօր չենք հետաքը-
րվել այդ նշանաւոր հարցով, որովհետեւ, դեռ
չենք հասկացած նրա նշանակութիւնը մեր ապա-

ցրվում են, քաղաքային վարչութիւնը կարող էր
գիմել Բագու-Թիֆլիսեան երկաթուղու վարչու-
թեանը նրա հետ պայման կապելով, որպէս զի
այդ վերջինը, գոնէ իր գծի վրա գտնվող գիւղերը
և քաղաքները գնացող ուսուցիչների ուղևորու-
թիւնը թիթեակցեմը անվարձ կամ պակաս գնով
սակաւորելով նրանց իրանց տեղերը, մասնա-
ւանդ որ խեղճերը նիւթական անտախաններ վի-
ճակի մէջ են ընկել:

Արդեօք այս անհշուտ ծառայութիւնը կանի մեր
քաղաքային վարչութիւնը մեզ մօտ հիւր եկած
ուսուցիչների գոնէ մի մասի համար:

Իսկ այն խեղճերի մասին, որոնք տրօյկով,
կամ ֆուրգօնով են գնում, նրանց մասին
ո՞վ պէտք է հողայ: Ամբողջ աշխարհիս երե-
ւին (ի հարկէ քաղաքակրթ երկրներին մասին է
խօսքը), երբ ժողովներ են լինում, ժողովի ան-
դամների գալու և գնալու ճանապարհածախսը միշտ
թիթեակցեմ են, կէս գնով են տեղափոխում ա-
մեն ճանապարհների վրա:

Համազասպեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 9 սեպտեմբերի

Այսօրվան «Մշակ» համարում (№ 165) զետե-
ղված լինելով մի նամակ, ուր ի միջի այլոց
խօսվում էր և շարժել երեկոյան իմ կարգացած
րեֆերատի մասին, պարտք եմ համարում զիմել
խմբագրութեանը և խնդրել տեղ նորոշել երկուս-
դիս յիշեալ նամակի մի քանի անձնութիւնները
պարզելու համար:

Շարաթ երեկոյան իմ կարգացած րեֆերա-
տում եւ շնչակ էի, որ «հրապարակական հան-
դիսաւոր հարցաքննութիւնները չեն ուղիղ ճանա-

դայ կեանքի մէջ: Անդրկովկասի հայ-կաթոլիկները
մէջ մինչև այսօր դեռ գոյութիւն չէ ունեցել ոչ
մի օրիորդական դպրոց, այլ մեր քաղաքի մի քա-
նի օրիորդները մօտ ժամանակներուս նոր են
սկսել գնալ հայ-լուսաւորչականների օրիորդական
դպրոց: Ալեքսանդրապոլի մէջ, հանդուցեալ տիկին
Նելիսաբէթ Բէպուրեան Սօղոյեանը ամբողջ 40
տարի ժողովում էր իր տանը հարկաւոր օրիորդ-
ներ և սովորեցնում էր զրեւ կարգաւ և կրօն, որի
համար յիշեալ տիկինը ընդունեց Լատին եպիս-
կոպոս Զօտմանից օրհնութեան կոնդալ:

Հայ-կաթոլիկ գիւղերում ոչ մի գրագէտ կնոջ
չես պատահի, որովհետեւ, հայ-կաթոլիկ գիւղացին
միշտ նախապաշարված է կանանց կրթութեան
գործի մէջ, և խորշում է մի որ է փորձ անել
կանանց դասի կրթութեան համար: Գիւղացու
կարծիքով, կանանց սեռի դաստիարակելն աւե-
րուրդ է, քանի որ նրանք «ստատանայի» խելը ու-
նեն, իսկ աւելի բըրանցիլը կարող է վտանգաւոր
լինել բարոյականութեան և համեստութեան հա-
մար:

Գրան պաշտպան է՝ մեր հոգևորականութիւնը,
որ տարածում է միշտ ժողովրդի մէջ սաստիկ ա-
տելութիւն դէպի ժամանակակից ուսումը. մեր
յետադիմութեան հիմքը մենք ինքներս հաստա-
տել ենք անտարբեր անշարժութեան վրա, որ չու-
նենք, չենք մտածում ունենալու կրթված մարդեր,
որ տային մեզ ընդունել, մտածող և գործող որ-
դիք, բարեփոխելու մեր ապագայ հասարակական
կեանքի պայմանները: Անցնելով գիւղական ու-
սումնարաններին, պէտք է ասած, որ նրանք,
հայ-կաթոլիկ հասարակութեան մէջ կախված են
քահանայի բարի կամեցողութիւնից, և թէ կամե-
նայ, կարող է ընդունել և գրել կարգաւ սովորա-
նել գիւղացու որդուն, եթէ ոչ, ուրիշ կերպ լինել
կարող չէ: Գիւղական ուսումնարան առելով մենք
հետևանքում ենք մի քանի երեկոյց ժողովված
գիւղի քահանայի տանը ձմեռ ժամանակ, որ սօ-
վորում են քերական կամ սարմատ:

Եթէ գիւղի քահանան գտնվում է փոքր ինչ ա-

պարհ աշակերտի յառաջադիմութեան, աշխատու-
թեան չափն ու աստիճանը ճիշդ որոշելու: և
այս ասում էի հիմնվելով այն հանգամանքի վրա,
որ շատ ու շատ անգամ լաւ աշակերտը վատ է
գուրս դալի, վատը լաւ. բացի այս՝ մատնացոյց
արի այն վնասակար հետեանքների վրա, որոնք
առաջանում են այդ տեսակ հարցաքննութիւննե-
րից, ուստի առաջարկում էի կամ եթէ հնար է
վերցնել հրապարակական հանդիսաւոր քննու-
թիւնները, կամ գոնէ ձեռն փոխել:

Այս իմ առաջարկութիւնը կարեւոր ճանաչվե-
լով՝ երկար վիճաբանութեան նիւթ դարձաւ: Մի-
այն մի 2—3 հոգի գտնվեցան, որոնք պնդում էին,
թէ որքան էլ վնասակար և աննպատակաւոր մար-
լին են քննութիւնները, այնու ամենայնիւ պէտք է
մնան դրանք—իբրեւ մի վսեմ դադար: Մնա-
ցածներից ոմանք չարիք համարեցին հարցաքննու-
թիւնները մեր դպրոցների համար, ոմանք աւե-
րուրդ, իսկ թէ նոյն իսկ նախագահը և թէ մե-
ծամասնութիւնը սկզբունքով ինձ հետ համաձայ-
նելով, որ հարցաքննութիւնները աւելորդ են, սա-
կայն ի նկատի ունենալով որ բոլորովին բառ-
նալը անհնար է, որոշեցին ձեռն փոխել, որ և
իմ առաջարկածն էր. իսկ թէ որպիսի ձեռն
ընդունվի, դեռ մասին յանձնեցին պ. Մանգլիսեան-
ցին ձևակերպելու, քանի որ անձնանշան եղան
նստի ժամանակ կատարել, թէ և այնքան չարաբոլե-
ցան: Ուրեմն ես հասալ նպատակս:

Յայտ ունեմ որ ձեռն պ. յօդուածագիրն էլ կը
մտաբերի պատահանքներ և կը համաձայնի ինձ
հետ: Մանրամասնութիւնների մասին մի այլ ժա-
մանակ:

Ա. Մեղեանց

Նապասով նիւթական դրութեան մէջ, նա աշխա-
տում է ժողովել գիւղի երեխանց և կարգաց-
նել, աչքի առաջ ունենալով գլխաւորապէս իր
նիւթական շահերը: Իսկ գիւղերում հայ-կաթոլիկ
հասարակութեան մէջ, քահանան մինակ անձն է,
որ կարող է կրթել և դաստիարակել գիւղական
երեխանցը, և այն ժամանակ, երբ գիւղացու հա-
մար հարկաւորութիւն չէ զգացվում փոքր ոյժերի
աշխատութեանց համար:

Շատ է պատահում, ինչպէս ասեցինք, որ գիւ-
ղերում պարագայում են վարժապետութեամբ և այն-
պիսի տիրացուներ, որոնք աքսորված են եղել հո-
ղեօր դպրոցից, չը կարողանալով ուրիշ ճանա-
պարհով աշխատել օրական ապրուստը, նրանք
ընտրում են խուլ տեղերում ուսուցչութիւնը և
տաժանելի աշխատանքով, վայրենի ծեծի միջնոր-
դութեամբ կամենում են սովորացնել երեխանե-
րին, տախտակից սկսած, մինչև կտակարան և
նարեկ: Գրանք աւելի վատացնում են, քան մի-
բան սովորեցնում:

Այստեղ պէտք է յիշել, որ գիւղերում ապրող,
ապահոված, նիւթական միջոց ունեցող քահանա-
ները (որ շատ են հայ-կաթոլիկների մէջ, որով-
հետեւ հոնձքը առատ է), երբեք չեն կամենայ
խանդակելու իրանց խաղաղութիւնը, և ուսումն
սովորեցնել կոպիտ, բան չը հասկացող գիւղացու
որդուն: Բայց շատերի փորագան այն է, որ մի
դուցէ երեխանից մէկը ստատանայ յայտնվի, և
ապագայում խել իր ձեռքից իւրաքանչիւր պատառ:
Որովհետեւ, գիւղացու որդին ձմեռ ժամանակ
միայն ազատ է կարգաւ, իսկ դարնանը նա
պէտք է օգնի իր հօրը գիւղատնտեսական գործի
մէջ, այդ պատճառով, աշակերտներից տասնից
մէկը հողի կարող է սովորելու գրել և կարգաւ,
իսկ շատերը, սովորելով և մոռանալով, ոչինչ չեն
կարող սեփականացնել: Բայց մի կէտ, որ արժան
է առանձին ուշադրութեան այն է, որ հայ-կա-
թոլիկ գիւղացին կրթութեան և դաստիարակու-
թեան անհրաժեշտութիւնը չէ տեսնում որպէս
կեանքի պայման այլ, աւելի այն նշանակութիւ-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք ԲԱԳՈՒԻՅ, պ. բժիշկ Արամիանցից,
հետեւեալ հեռագիրը: «Խորին շնորհակալու-
թիւն Մշակի № 161 մէջ տպված մայրենի լե-
զուի նշանակութեան ճիշդ գիտնական բացա-
արութեան համար»:

Մեզ գրում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՅ հետեւեալը:
«Լսում ենք որ Գեորգեան ձեռնարանի որդեգիրնե-
րից արձակված են 24 հոգի: Գասարաններում
մնացել են 52 հոգի և սրանցից էլ մի քանիսն
իրանց ազատ կամքով ուղարկ են թողնել ձեռնա-
րանը»:

Այսօր, շաբաթ օր, սեպտեմբերի 11-ին, օրի-
որդ Հեղինէ Ղորղանեան երգչուհին տալիս է իր
եղբօր, պիանօի վրա ածող Գ. Ղորղանեանի մաս-
նակցութեամբ մի կօնցերա Արթուրու թատրո-
նում: Տոմարները մինչև երեկոյ կարելի է ստա-
նալ պ. Լանկօի երաժշտական մագաղանում, իսկ
երեկոյեան թատրոնի կասսայում: Օրիորդի ձայնը
սաստիկ գովում են:

Մի պարոն հաղորդում է մեզ հետեւեալը: «Շատ
ժամանակ չէ ծանօթացայ մի հայ երիտասարդի
հետ, որի մասին ինձ պատմեցին թէ մեծ ընդու-
նակութիւն ունի դէպի առաւելաները, առհասա-
րակ, բայց մասնաւոր դէպի մաթեմատիկան:
Բայց տարարադարար յիշեալ երիտասարդը յե-
տին չքաւորութեան պատճառով միջոց չունի
չարունակել իր ուսումը: Գա մինչև վեցերորդ
դաստառն աշակերտել է Ներսիսեան դպրոցում և
ա՛հ մի տարի է, որ թողել է դպրոցը, չքաւո-
րութեան պատճառով և յուսահատված չը գիտէ
ո՞ւմ գիմէ և ինչ անի, որպէս զի համար իր մտա-

նքն ունի, որ իր որդին կարողանար եկեղեցում
դասը ելնել, և կարող զանազան աղօթաբերը:
Այդ է պատճառ, որ հայ-կաթոլիկ ընտանիքնե-
րում հալածվում են արտաքին գրքերը, որոնք կրօ-
նական չեն, այլ սատանայական դիտութեանց են
ծառայում: Ժողովրդի մէջ այդպիսի ծուռ և սը-
խալ հակացողութիւն տարածելու նպատաւոր
են մեր հոգևորականները, որոնք, այդպիսի
բաների մէջ տեսնում են իրանց վնասը, և կամե-
նում են միշտ պաշտպանված աննել իրանց պա-
տիւր և համարմունքը: Ի՜նչ զարմանք բան. եթէ
մեր հոգևորականները փառասեր են, այդ աւելի
նպատաւոր է նրանց համար, որովհետեւ, նրանց
կարծիքով հարկաւոր է ժողովրդի հացը ուտել,
նրա քրտինքը սեփականացնել, և նրանց համար
պատ և ծոմ պահել: Բայց այն, ինչ որ հարկա-
ւորն է, անհրաժեշտ է մեր ժողովրդին, այն, ինչ
որ կը վերաբերի իրական կեանքին, և գործնական
ուղղութեանը, այն, ինչ որ կը վերաբերի ուղղա-
կի կեանքի պայմաններին, այդպիսի ուսմունքը
հեռու են մեղանքը, և այդ պատճառով, մեր հա-
սարակական կեանքը սահմանափակված է կրօ-
նական չրջանով, իսկ ժողովրդական գաղափար-
ները սեղմված են, և պատրաստում են մեզ համար
վատ ապագայ: Մենք ասեցինք այս բոլորը ա-
ռանց չափազանցութեան, ինչպէս ժողովրդի բա-
րի կամեցող, իսկ իրողութիւնների առաջ մենք
մեղաւոր չենք: Մենք կարծում ենք, որ մեղա-
դրանքից ազատ չենք:

V.

Ինչպէս արեցինք, Անդրկովկասի հայ-կաթոլիկ
հասարակութեան ամբողջութիւն կազմող մեծա-
մասնութիւնը գիւղացիներն են, որոնց որդիքը
միայն սովորում են հայ-կաթոլիկ դպրոցներում,
այդ պատճառով մեր դպրոցները պէտք է յար-
մարվեն գիւղական կեանքին, և ծառայեն ուղ-
ղակի գիւղացու մտաւոր զարգացմանը, և նորա
իրական շահերին:

Բայց մեր ցոյց տուած թէ քաղաքների և թէ
գիւղերի ուսումնարանները, բոլորովին անհամա-

զրուեցանք, իր տենչացած գաղափարին, իր ուսումը շարունակելու բարձրագույն ուսումնարաններում: Մեր մամուլը մեծ բարեբարություն արած կը լինի ոչ միայն այս երիտասարդին, բայց և մեր ուսումնարանական գործին, առհասարակ, եթէ նրա վրա թէ հայ հասարակության և թէ դպրոցական վարչութիւնների ուշադրութիւնը հրաւիրէր: Գուցէ միջոց կը տրվէր նրան իր ուսումը բարձրագույն դպրոցում շարունակելու, մանաւանդ որ երիտասարդը համաձայն է իր բարեբարների ցանկութեան համեմատ, ուսումը աւարտելուց յետոյ իր ամբողջ կենսւոյը նուիրել հայ ուսումնարանական գործին: Թէ որքան ճիշդ են իմ ասածները կարելի է տեղեկանալ Ներսիսեան դպրոցի ուսուցիչներէից, օրինակ պ. Աբիսողոմ Յովհաննիսեանից:»

Պ. պ. Գեորգ Շէրինց և Տիգրան Բոնուսի խնդրում են մեզ տպել հետեւեալ հերքումը: «Աւելորդ կը համարենք պատասխանել ձեր պատական լրագրի № 140 մէջ տպւած Նոր-Բայազէտից պ. Ս. Բատիկեանցի յօդուածին, եթէ այդ տեսակ յօդուածները պարզամիտ ժողովրդի միտքը չը շփոթեն: Յօդուածագիրը յիշելով Նոր-Բայազէտում տուած վերջին ներկայացումն, չէ յիշում որ այդ ներկայացումն անաջող անցաւ: Այնպէս տոմարներէից 35 հատ միայն վաճառվելով, գոյացաւ արգիւնքը ոչ թէ 47 բուր, այլ 42 բուր, ծախսը եղաւ ոչ թէ 7 բուր, այլ 19 բ. 50 կոպէկ: Բացի այս ծախսերից նաև դահլիճի լուսաւորութիւնը և այլ պէտքերից 13 բուր տակաւին մնում են ապագայի, որի հաւաքելը անկարելի է, կարծում ենք: Արեւմտեան մասը դուռ արդիւնք 9 բ. 50 կ., որ խմբի հաճութեամբ բաժանվեցաւ մի քանի աղքատների վրա: Գալով Նոր-Բայազէտում բացված դեղատան (ապոթեկային), պ. Բատիկեանի արած նկատողութիւնն էլ բոլորովին սխալ է: Գեղատունը ոչ թէ գրեզական է, այլ քաղաքային, որից կոչովի նաև գաւառիս ամբողջ աղքատներն օգտւում են:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՐԱՆՍԻԱՅԻ ՆԻ ԱՆՊԻԱՅԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բերլինի կիսապաշտօնական մամուլի կծու

պատասխան և անօգուտ են դիւզացու մանուկի համար: Որովհետև ամեն տեղ, և ամեն ժամանակներում մեր դպրոցների կառավարութեան ղեկը եղել է միշտ հոգեւորականների ձեռքը, այդ պատճառով, նորա երբեք չեն ծանաչել, և գուցէ չեն կարողացել ճանաչել դիւզացու պահանջը և նորա կենսի պայմանները:

Նորա ճանաչում են դիւզացուն, որպէս անբան, և բարոյական գերի, որ պէտք է աշխատի և կերակրէ ծոյլ եկեղեցականներին, ուրեմն ինչ հարկ կայ նորա բարոյական անկախութեան, ազատ մտածողութեան իրաւունք սեփականացնել, անխնայ, չլու հնազանդին...

Գիւղացու համար, որքան որ հարկաւոր է գիտենալ կրօնական ուսմունքը, այնքան և հարկաւոր է, որ նա գիտենայ ընտանեացի գործնական աշխատքը, ճանաչէ կենսւոյը և նորա պայմանները, հասկանայ իր մտաւոր և նիւթական շահերը, և ճանաչէ չարն ու բարին, և ապրէ որպէս դիտակցաբար ապրող մարդ: Մեր գիւղացու համար ոչինչ չը կայ մեր դպրոցներում, և այդ պատճառով, մեր կենսւոյը անշարժութեան ու յետադիմութեան է դատապարտած: Ալէքսանդրապոլի դպրոցում, որտեղ ուսանում են գիւղական տիրացուները, որոնք պէտք է մեր ժողովրդի մշտաւոր կենսւոյը առաջնորդ լինեն, այդ դպրոցում, չեն աւանդում նրանց համար ամենանհրաժեշտ ուսմունքներ, օրինակ ընդհանուր, ուսուցաց և հայոց պատմութիւն, թուրքաւարութիւն, բնական և ուսումնական աշխարհագրութիւններ, բնական պատմութիւն և բնագիտութիւն: Գիւղացուներն անհրաժեշտ է արդիւնաբերութեան հարցերը, որոնք պէտք է առաջի նպատակը լինեն մեր դպրոցներին, բոլորովին դուրս չունենա: Մենք ցանկով ասում ենք, որ Ալէքսանդրապոլի դպրոցում գտնված գիւղացի աշխարհագրական քարտէզները փոշիներն են մէջ և թաւալում, ինչպէս այդ դպրոցի մատենադարանի գրքերը երբեք կարդացվում չեն, այլ տարին մի անգամ դուրս են բերում արեգակի տակը չորացնելու, և ցեցե-

ակնարկութիւնները այն բանի մասին, որ Ֆրանսիական այժմեան կառավարութիւնը և նրա կողմնակից լրագրիները համակրութեամբ են վերաբերվում անգլիացիների եզրկալական արշաւանքին այն նպատակով, որ Գերմանիայի հակառակ վարվեն, ամենին չէ շփոթեցնում Ֆրանսիական միւնիստրութեանը, գրում է „Толоче“: Ինչի մէջ որ գերմանական լրագրիները մեղադրում են Ֆրանսիական անգլիացիներին, այդ անգլիացիները իրանց պարտականութիւն են համարում և բացարձակ խոտովանում են, որ Անգլիայի հետ բարեկամ լինելը նրանց համար լծանք է հէնց այն պատճառով, որ այդ բարեկամութիւնը հաճելի չէ Գերմանիային:

Փարիզի „Temps“ լրագիրը ուղղակի յայտնում է, որ Բերլինի կիսապաշտօնական լրագրիները ի դուր միայն կորցնում են թուղթ և ժամանակ, աշխատելով գրգռել Ֆրանսիային Անգլիայի դէմ: Փարիզի մէջ շատ լաւ հասկանում են, որ Անգլիայի և Ֆրանսիայի անհամաձայնութիւնը կարող է օգտակար լինել միայն Գերմանիայի համար, և աշխատում են այդ անհամաձայնութիւններին առիթ չը տալ: Անգլիայի բարեկամութիւնը Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեան հիմնաքարը պէտք է լինի: Եզրկալական հարցը աւելի էլ կամրացնէ այդ բարեկամութիւնը հէնց այն պատճառով, որ, ինչպէս հաւատացնում են իտալական լրագիրները, Կ. Պոլսի կոնֆերենցիայի իսկական նպատակն էր անհամաձայնութիւն ծագեցնել Ֆրանսիայի և Անգլիայի մէջ: Ֆրանսիական կառավարութիւնը անկասկած կարող է օգտվել անգլիացիների եզրկալական արշաւանքից, քանի որ նրա ձեռքին են Տունիս և Ալժիրիւս, որոնք միջոց են տալիս չափաւորել այն վնասները, որ կը պատճառի Եզրկալատի անցնելը անգլիացիների ձեռքը: Նիւթական օգուտն այն կը լինի, որ

իւրից ազատ պահելու... Ինչ է հարկաւոր գիւղացուն սովորեցնել. վերացական մտքեր, թէ իրական ուսմունք, ծանօթացնել նրան բնութեան հետ, հասկացնելով նրան բնութեան այն հրաշալիքը, որից կարելի է օգուտ բաղել, ապահովելու գիւղացուստեան կարգապահ միջոցներով իր կիսանքի գոյութիւնը, որից յետոյ, գեղեցիկ մտքերը, և գեղարուեստական տեսիլները նրան պիտանի լինեն: Յաւալի է նոյնպէս երբ մի ամբողջ ժողովուրդը բոլորովին անձանօթ է պատմութեան հետ և ապրում է որպէս կրօնաւոր, երկնքից իջած մանանայի յոյսով: Առաջին իրաւի, կանոնաւոր երեւոյթութեան, ինչպէս նաև ուղղադրութեան և վայելչադրութեան անհրաժեշտութիւնը մեր դպրոցներում չէ կարելի ուրանալ: Մեր ուսումնարանների դասաւարտութեան եղանակը, ինչպէս նաև մեր դպրոցներում ընդունված արեւմտեան բարեքաղ և վայելչադրութիւնը, մեզ համար բոլորովին վնասակար և անօգուտ պէտք է համարել, որովհետև, բացի դանդաղ և անմարտելի անհրաժեշտութեան, ինչպէս օգուտ չեն կրանք մեր միջին ժամանակի կրօնաւոր կը պատճառեն որ էժան չի նստի: Բացի դրանցից, մեր կարծիքով, գլխաւոր պակասութիւնը մեր դպրոցների այն է, որ աշակերտները ընդունվում են, որպէս գիւղերից, զանազան տեղերից, ինչպէս ցոյց տուինք 15 տարեկանից սկսած երեւմի բոլորովին անդրադառնալ, ուրեմն կը նշանակէ, նրանց հետ աշխատելով, այն էլ այդպիսի եղանակով, բոլորովին անօգուտ մի գործ կը լինի: Առաջին բանի դրութեանը համար պէտք է աշխատի և մտածէ ժողովրդի կողմից ընտրված խելացի և գործունեայ հոգաբարձութիւնը, որ ունենայ մշակած կանօնադրութիւն, ուսուցիչների ընտրութեան և ուսումնարանի նիւթական միջոցի ապահովութեան համար գործողներ, որ առանց այդ անհրաժեշտութեան, մի դպրոց ինչ նպատակ թէ կուզ ծառայէ, և որպիսի կառավարող ունենայ, երբեք գոյութիւն ունենալ կարող չէ:

Մեր ուսումնարանները առանձին հաստատած

Ֆրանսիական տիրապետութիւնը վերջի-ջեալ երկու երկիրներն մէջ կառարեւապէս ապահոված կը լինի, իսկ բարոյական օգուտը այն կը լինի, որ Գերմանիան այլ ևս չի կարողանայ առանձնացնել Ֆրանսիային Եւրօպայի մէջ: Այդպիսի հետեւանքներն հասնելը չափազանց ցանկալի է Ֆրանսիացիներին համար, որոնք հասկանում են իրանց հայրենիքի իսկական շահերը:

Քաղաքականութեանը հետեւող անձանց շատ լաւ յայտնի է, որ այն ժամանակից ինչ անգլիական կառավարութիւնը Գաղղիա-տօնին յանձնվեցաւ, իշխան Բիսմարկի ուշադրութեամբ հսկում էր այդ կառավարութեան բարեկամութեան վրա այն պետութիւնների հետ, որոնց յարաբերութիւնները Անգլիայի հետ լորդ Բիգոնֆիլդի ժամանակ սառն էին: Բերլինի մէջ սաստիկ շփոթվեցան, երբ անցեալ ձմեռ Ֆրանսիական կառավարութիւնը Գաղղիա-տօնի ձեռքը անցաւ, որ յայտնի է իբրեւ Անգլիայի ջերմ կուսակից Եզրկալատի վերաբերութեամբ: Գաղղիա-տօնի միւնիստրութեան անկումը և Ֆրէյսինէի միւնիստրութեան կազմվելը այդ շփոթութեան առաջն առան, բայց այն ժամանակից, որ Ֆրէյսինէի միւնիստրութեանը փոխարինեց Գիւլլիերմի միւնիստրութեանը և դրանից յետոյ Ֆրանսիական հանրապետական մամուլը սկսեց համակրութեամբ վերաբերվել եզրկալական արշաւանքին, Բերլինի մէջ նորից անհամաձայնութեան և սկսեցին միջոցներ գործ դնել Անգլիայի և Ֆրանսիայի մէջ անհամաձայնութիւն սերմանելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—[Օնգոնից լրագիրներն հեռագրում են սեպտեմբերի 2-ին հետեւեալ: Ուէլսէյ Նոյնայիլայից մի հեռագիր ստացաւ, որ հաղորդում է, թէ երէկ առաւօտ Տէլէ-Էլ-Էթերի վերջրած է և Արաբի-փաշայի զորքերը ջարդված և ի փախուստ են դարձ-

ուսման առաքելանքների ծրագիրներ և կանօնադրութիւն երեք չեն ունեցել, քերականից սկսած մինչև նարեկ, և բերականութիւնը եղել է մեր ամբողջ ուսման ընթացքը:

Առաւմտարանը եղել է միշտ և ամեն ժամանակներում մի անհատի, մի վարդապետի լիազօր իրաւանց ներքոյ, այդ պատճառով, մենք ժողովրդի կողմից հոգաբարձութիւն երեք չենք ունեցել, որ աշխատել ուսումնարանի նիւթական վիճակի վրա, և կարելի եղած ժամանակ, բազմաներ ուսուցիչներ թիւը, և ուսանելի առարկաները:

Այդ անհրաժեշտութեանց վրա կարող էին մտածել քաղաքներում ապրող հայ-կաթօլիկները, որոնց մէջ կան բան հասկացող անհատներ, և միջոցապէս կայ, շատերի կարծիքով, երիտասարդութիւն: Բայց մի բրդութիւն, որքան էլ դառն լինէր մեզ համար հրապարակաւ յայտնելու, այն ամենայնիւ պէտք է դուրս դալ մեր բերականից, որ հայ-կաթօլիկ հասարակութեան մէջ որպէս կատարեալ կրօնական մի համալիր, որի ամեն հասարակական գործերը, սեփական կամքի աղատութիւնը, հոգեւորականութեան կողմից եղել է միշտ հալածված, և արհամարհված, այդպիսի չըլանում, կրկնում ենք ցաւ է խոտովանել, որ երիտասարդութիւնը առաջ դնալ չէ կարող: Մարդս իրան սխալ է կարծում, երբ տեսնում է, որ ժամանակի չըլանը ծնեցնում է մտքերն ու զգաւաբանը, ծնեցնում է այդ մտքերի պաշտպաններ, բայց հին ժամանակի մտքերը, որոնք խոր արմատացած են ամբողջ մէջ, նորան խեղդում են, և հալածում կենսի չըլանից: Այդ իրողութիւն է որ չէ կարելի մերժել:

Հայ-կաթօլիկ երիտասարդութիւն որտեղ կայ, այնտեղ հալածվում է անխնայ հոգեւորականութիւնից: յայտնի է, որ երկուսի մտածմունքը և բարոյական կարծիքներն ու շահերը հակառակ են միմեանց, այդ պատճառով նոյն դրութիւնը շատ դժուարին և անտանելի է: Ժողովրդի չըլանից դուրս եկած, և ամեն մի

րած: Արաբիի զօրքը 20,000 հոգուց էր բաղկացած: Ուէլսէյ 11,000 հետեակ մարդիկ ունէր, 2,000 հեծելազօր և 60 թնդանօթներ: Անգլիական զօրքի փորձախնդրական պատճառով, Ուէլսէյ հրաման տուեց յարձակում գործել մինչև արեգակի ծագելը, որ կարողանայ միութեան մէջ անցնել նրա բանակի և Տէլ-Էլ-Էթերի մէջ եղած տարածութիւնը: Առաւօտեան 1 ժամ և 30 րոպէին զօրքը յարձակվեցաւ թշնամու բանակի վրա: Հեծելազօրը չըլապատեց թշնամու դեմը, արեւածաղին սկսեց յարձակում: Զօրքերը գերազանց կերպով կուտւում էին: Թշնամու բանակը վերջրած է բոլոր ամբողջութիւնով և ուսեստի ու զենքերի պաշարներով: Թշնամին հաղթաներով էր փախչում, թողնելով զենքերը, բայց հեծելազօրը վրա հասաւ փախչողներին: Թշնամու կորուստը շատ մեծ է, անգլիական վերաւորվածներն մէջ թեթեւ կերպով վերաւորված է գնեւալ Վիլլիս:

—[Բէյսերի զործակալութեանը Ալէքսանդրիայից հեռագրում են, որ Կաթի-Վօլարի հրամանատարը շէրֆին մի նամակ գրեց, որի մէջ առաջարկում է նրան անձնատուր լինել:

—[Բէյսերի զործակալութեանը հաղորդում են Ալէքսանդրիայից, որ բանակցութիւններ են սկսված Կաթի-Վօլարի անձնատուր լինելու մասին: Անգլիական զօրքերը հրաման ստացան ամբողջութիւնը գրաւել:

—[Օնգոնից լրագիրներն հեռագրում են սեպտեմբերի 2-ին հետեւեալ: Ալէքսանդրիայի հրամանատար, զենեալ Վուդի հեռագիրը ստում է, որ Կաթի-Վօլարից մի օֆիցըր մի նամակ գրեց, որի մէջ յայտնված է, թէ ապստամբների զօրքերի գլխաւորները ցանկանում են նիւթակիւ խէղիլին և հրաման տուին բացանել թուրք և խնդրում են հեռագրական հաղորդակցութիւնը վերականգնել, ասելով, որ ապստամբված զօրքը վերջապէս բոլոր վնասակար գործողութիւնները:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի աստուածապաշտ մահմետական համարեց Ղուրանի բառերի թիւը: Երեւեալ որ այդ գիրքը պարունակում է իր մէջ 77,639 բառեր և 323,015 տառեր: Շվեյցարացի աստուածաբան Խլէլին, իր կողմից, երեք տարի շարունակ, օրական 9

դառնութիւն իր վրա փորձած երիտասարդութիւնը մտածում է ժողովրդի անտանելի դրութեան վրա, բայց ոչինչ անել չէ կարող: Նա պէտք է լուռ նստի և սրտի դառնութիւնները ծածկէ խոր արհամարհանաւց մէջ:

Իսկ բացառութիւն կազմողները, որոնք կամենում են հրապարակ դուրս գալ և պաշտպանել ժողովրդի շահերը, արժաւորելով ամբողջ մէջ ժամանակակից մտքեր ու զգաւաբաններ, որոնք բողոքում են ժողովրդի անտարբերութեան և անշարժութեան դէմ, այդպիսիները բարոյապէս հալածվում են հոգեւորականութեան կողմից: Ով որ ձանաչում է հայ-կաթօլիկ հասարակութիւնը, նա կարող է հասկանալ թէ ինչ դեր է կատարում հոգեւորականութիւնը ժողովրդի մէջ: Բաւական է որ մի խօսք ասէ հոգեւորականը մի երիտասարդի դէմ, և ցոյց տայ նրան որպէս կրօնի և եկեղեցու թշնամի, որպէս «ֆարսանոս», այնուհետև, այդ երիտասարդի անձնական պատիւը և համարումը կորցրած կը լինի ժողովրդի առաջ, և դուր կը լինի եթէ աշխատի ցոյց տալ իր անմեղութիւնը և ճշմարտութիւնը: Այդպիսի դառն փորձեր մենք փորձել ենք մեր վրա, և գիտենք նորա ցաւը զգացող սրտի համար...

Բայց մի բարոյական միւնիստրութիւն, որ ունի ամեն մի երիտասարդ, ամեն մի ճշմարիտ բարեացակամ ժողովրդի, այդ մէջ է, որ նորա հաւատացած լինելով, որ փոքր խմբեր կարող են շատ անալ ժամանակին, մեծանալ և ոյժ տառաւել, յուսալով որ ժամանակի հոսանքը կը հարթէ բոլոր քարոտ ճանապարհները, և կը պատրաստէ պողտուտ, բարեբեր հող ազգային համար: Իսկ այդ ժամանակին հասնելը պահանջում է հաստատ յոյս և աշխատանք: Ճշմարտութիւնը իր յաղթութիւնը պէտք է տանի, հանդերձ է հարկաւոր և գործող...

VI

Այժմ, ընթերցողը կարող է մեզ հարց առաջարկել, թէ ինչ պատճառով հայ-կաթօլիկ հասա-

ժամ պարագայով համարեց չին և Նոր կտակարանի մէջ պարունակվող բառերի և տառերի թիւը: Յայտնվեցաւ որ այդ սուրբ գրքերը պարունակում են իրանց մէջ 173,662 բառ և 3,566,480 տառ: Իսկ «և» մասնիկը կրկնվում է նրանց մէջ 46,427 անգամ:

«Русский Курьер» լրագրում կարդում ենք հետևեալը: Իր երրորդ դաստիարակութիւնը Չինաստանի մասին զօկտոր Պիտաեցիկի սկսեց նրա աղբարեակութեան մտաւոր և տեխնիկական զարգացման տեսութեամբ, զեռ ևս Քրիստոսից առաջ Չինաստանը, ինչպէս երևում է, շատ հաստատ տեղեկութիւններ ունէր ճիշդ գիտութիւնների մէջ և հէնց այն ժամանակ միայն կարող էր այնպիսի գիտեր անել, ինչպէս վառօդը, թնդանութիւնը և այլ առարկաները, որոնք մեծ աղբարեութիւն ունէին ուրիշ ժողովրդների առաջադիմութեան վրա: Մտաւոր զարգացումը թէպէտ և դանդաղ կերպով էր ընթանում Չինաստանում, բայց առանց կանգնելու առաջ էր գնում մինչև XVI-դ դարը, երբ ներքին խռովութիւնները և հարեանների հետ ունեցած կռիւր խախտեցին գիտութիւններով և արհեստներով խաղաղ պարագայները: Ինչուի անկատարելութիւնն է պատճառ, որ նոր գիտութիւնների ձեռք բերելը չինացիներին համար անկարելի դործ է դառնում, օրինակ իւրաքանչիւր դիւանական տէրմինի համար, անհրաժեշտ է նոր նշան հնարել, և նոր, ոչ մէկ նախկին հասկացողութիւններին չէր համապատասխանող անուն: Գծուած չէ պատճառ մէկ շատ գիտական մարդու, որը, այնուամենայնիւ, վերին աստիճանի տգէտ է գիտութեան ուրիշ ճիւղերում, իր մասնագիտութիւնից դուրս, չորսին լեզուի դժուարութիւնների: Չինաստանում չէ կան ոչ համալրականներ, ոչ ֆակուլտետներ, ոչ հիւանդանոցներ: Մեր հասկացողութեամբ բժիշկներ նոյնպէս չէ կան, բայց բազմաթիւ խաբարներ կան, որոնք իրանց բժիշկներ են անուանում: Չինաստանում բժշկութեամբ պարագել ոչ ըզին աղբարեութիւն չէ, և այդ պատճառով, հիւանդանոցները զրկված թշուառ հիւանդների զրոյթները սարսափելի է: Ամենամասնավոր դեղեր են դործածում, օրինակ, վագրի ճանկերը, դատապարտված յանցաւորի լեարդը, և այլն: Բժշկականութիւնից յետոյ դատախոսը կրթութեամբ անցաւ: Ամենահամակրելի բանը չինացիների մօտ դաստառութեան կատարեալ ազատութիւնն է, ամեն տեղ

բակութիւնը կամենում է, որ իր վրա միտք դարձնէ թիֆլիսում գումարված հայոց ընդհանուր Ուսուցչական ժողովը, քանի որ, հայ-կաթօլիկները մեղանից առանձնացած են ապրում, և մենք ներանց օգնել չենք կարող: Այդ հարցը, մասամբ կարելի է իրաւացի համարել: Գործն մենք կը պատասխանենք, որ մեզ իրաւունք տուող է այն նպատակը, որպիսին է, ընդհանուր կրթութեան և դաստիարակութեան գործը:

Ի՞նչ ենք հասկանում «ընդհանուր կրթութիւն» բառից:

Մենք հասկանում ենք այն, որ ընդհանուր կրթութեան և դաստիարակութեան գործի մէջ պէտք է միասնաբար ընդգրկուին հայերի սրտերը, առանց կրօնի խտրութեան, որ հաւասարապէս զարգանան, մտաւոր և հասարակական կեանքի մէջ:

Մեզ դուք պատասխանեն, որ թող հայ կաթօլիկները մեղանից օրինակ առնեն, և առանձնապէս աշխատեն բարեկարգելու իրանց զարգացումը մեր ընդունած ուղղութեամբ, և դաստիարակութեան գործը հաւասար առաջ տանելով, զարգանան:

Այդ շատ ու շատ ցանկալի է հայ-կաթօլիկներին համար, բայց պէտք է աչքի առաջ ունենանք, որ հայ-կաթօլիկների ներկայ գրութիւնը և նուցա մտաւոր զարգացումը չեն համապատասխան այդ շատ ցանկալի գործը առաջ տանելու, իսկ յետ մնալը, երկու կողմից էլ մեծ վնաս է: Մենք այստեղ առաջ կը բերենք դարձեալ Ալեքսանդրօպոլը, որ ունի հայ-կաթօլիկ ընտանիք 57 տուն, որոնք հազիւ հազ կարող են պահել մի եկեղեցի և մի քահանայ: Մենք հարցնում ենք, կարող են նոքա պահել փոքրի շատ բարեկարգած զբոլոց, որ պահանջում է մի քանի աշակերտների կարգաւոր համար 4,000 բոլոցի:

Այդպէս են և միւս քաղաքներում, իսկ գիւղերում, ամբողջ տղիտութեան պատճառով, դիւղական զարգացումը պահանջը չէ զգացվում: Նրանց մէջ պէտք է արծարծել, հասկացնել ուսման կա-

համայնքներն են հիմնում ուսումնարաններ իրանց միջոցներով, առանց որ և է իշխանութեան միջնորդութեան: Կառավարութիւնը շատ անգամ չը գիտէ մինչև անգամ թէ այն ինչ կամ այն ինչ տեղ ինչ ուսումնարան կայ, և այն ժամանակ ինքն հասարակութիւնը, իմանալով, օրինակ, որ մի նշանաւոր մարդ է եկել իրանց դատարը, խնդրում է այցելել իրանց ուսումնարանը, որովհետեւ դա կազմում է, այդպէս ասած, նրանց պարծանքը: Նրանց ուսումնարանները չունեն ոչ ակադեմիական տարի, ոչ պրօֆէսորներ, ոչ դասատուներ: Այնտեղ մտնելու համար ոչ մէկ զօկուէնտ չէ պահանջվում: Իսկապէս ուսման ընթացքը կայտնում է մի գրքի ուսումնասիրութեան մէջ, որ պարունակում է մինչև 2000 նշաններ, այդ գրքի քից աշակերտը ճանաչում է իր պարտաւորութիւնները, որպէս հպատակի, և քաղաքացու իր իրաւունքները, հէնց այնտեղ նա ծանօթանում է իւրաքանչիւր վարչութեան իշխանութեան սահմանների հետ և սովորում է քաղաքավարութիւն և յարգանք դէպի մեծերը: Այդ բանը ուսումնասիրելու համար երբեմն պահանջվում է մօտ 10 տարի մնալ ուսումնարանում: Գնալով, եթէ աշակերտը ցանկանում է, նա սկսում է ուսումնասիրել մէկ ուրիշ գիրք, որ պարունակում է աշխարհագրական, պատմական և այլ տեղեկութիւններ: Ուսումը վերջացնելուց յետոյ, ցանկալիները կամ մարաքաղաք են ուղևորվում, կամ մի որ և է մեծ քաղաք ընտելութիւն տալու համար: Այնտեղ կան զրա համար առանձին յանձնաժողովներ: Քննութիւնը կատարվում է բաւական ինքնուրոյն կերպով: Մի առանձին չինութիւն կայ, որ կարծես բաժանված է ակադեմիայի վրա, որ և առանձին առանձին փակում են ընտելութիւններ: Լաւ խաղաղութիւնից յետոյ, համոզվելու համար, որ աշակերտները պարտաւոր հեղինակութիւններ չունենան, նրանց փակում են մօտաւորապէս մէկ օր ու գիշեր: Քննութիւնները վերին աստիճանի խիստ և արդարացի են լինում, ոչ մէկ խնամութիւն չի օգնի տգէտին առաջ դնալու, և ընդհակառակն, տաղանդաւոր մարդը, թէպէտ և ստոր ծագումի, անպատճառ կը նկատվի և կը քաջաբերվի:

Այս ալ աւաքից մեզ դուռն են: Ձեր լրագրի վերջին համարներից միայն մէջ տպւած Մեծ-Ղարաբեխայից նամակը մեր հայ ուսուցչների գրութեան վերաբերութեամբ, մի ճիշդ պատկեր

բերութիւնը, իսկ յետոյ, իրանք կաշխատեն ունենալու:

Բացի դրանից, Արդիւղիկանի հայ-կաթօլիկները ցրված են դանաղան տեղեր, չունեն իրանց բարձր հոգեւոր կառավարութիւնը, որ հոգար գիւղացիների դրութեան վրա:

Գարեբի ընթացքում, կրօնական առանձնացած գրութեան մէջ մնալով, նոքա մնացել են տգէտ և յետաւոր, դուրիս և է առաջադիմութիւնից: Նոքա աշխատել են հասկացել են իրանց գրութիւնը, բայց հին սխալը ուղղել չեն կարող: Նախկին և նպատակների տարբերութիւն չը լինելու պատճառով, նոքա մեծ իրաւունք ունեն օգնութիւն սպասելու մեծամասնութիւնից, որոնք շատ բարձր են մտաւոր զարգացմամբ և դիւրով: Իսկ մեծամասնութեան ուղղակի չափ պահանջում է, չը կորցնել փոքրամասն, սեփական ոյժերը: Տգէտ մնալ մի ժողովրդի համար, և բարոյապէս կորչելը, ոչինչ դանաղանութիւն չունի:

Այս բոլորն ազգամիջ եղբայրներ ցրված են Հայաստանի դանաղան տեղերում, և գործում են: Նոյնը անում են և բողոքական քարոզիչները...

Ձե խորատուղիկը համար այդ տխուր իրողութեանց մէջ, այդպէս կասնք, ինչ ենք անում մենք, մենք, որ հազարաւոր յօդուածներով միմեանց անձնականութեան ղեմ ենք դիպչում, մենք, որ խնդրում ենք դանաղան յօդուածներ և օղային պլաններ:

Ուրեմն դառնալով մեր խնդրին: Կամենում է արդեօք մեծամասնութիւնը, որ հայ-կաթօլիկները մնան առանց ուսումնարանի, մնան տգէտ, մնան անկրթ: Մենք կարծում ենք որ ոչ: Իսկ եթէ չեն կամենում, մեր կարծիքով, կարելին այս է. 1-ը. Որ ներկայումս թիֆլիսում դուրսած Ուսուցչական ժողովը մի առանձին խիստ կայացնէ և մտածէ, արդեօք կարող են կանոնադրութեան համաձայն դասական ուսումնարաններում ընդունել հայ-կաթօլիկ երեխաներին, առանց կրօնի խտրութեան: 2-ը. Մեր դատաւական ուսուցչները իրանց պարտականութիւնը

է ներկայացնում նրանց նիւթական անապահով վիճակի մասին: Մեր մէջ դժբաղդաբար ուսուցչները, ըստ մեծի մասին, գրաւանաւոր են այն դասակարգին, որ օրական ստացածը նոյն օրն էլ ծախում է: Մի ամբողջ հասարակութիւն անտարբեր է, քնած է, նա իր ուսումնարանները չէ պահպանում, մնում է մի քանի աղքատ ուսուցչներին ուսումնարանի պահպանութեան մասին հոգալ: Նրանց առանց այն էլ դառն դրութիւնը աւելի անտանելի է դառնում, երբ նրանց հարկադրում են ամբողջ 3 կամ 4 ամիսներով ուժեղ չը ստանալ: Պ. պ. հոգաբարձուները, դուք այն կարծիքն են, թէ ուսուցչները այնքան ստիպաւոր են, որ օրով էլ կերակրվել վիճակը, երբ նա 3 կամ 4 ամիս ուժեղ չը ստանալով, դիմում է հոգաբարձուներին և խնդրում է իր ուժեղի գոնէ տասներորդ մասը, — և այն էլ չեն տալիս նրան, ասելով թէ չը կ'այ: Ով որ ուղղում է համբերութեան դասեր առնել, թող դիմէ մեր դպրոցների հոգաբարձուներին:

Հայոց ընդհանուր ուսուցչական ժողովի վերջին նիստերը աւելի էլ նախապետական կերպարանք ստացան, քան թէ առաջին նիստերը, չը նայելով որ անդադար լսվում են լեֆէրատ, լեֆէրէնտ և այլ սրանց նման մեծ մեծ խօսքեր: Պ. նախագահը ուսուցչների անունը տալիս է, ինչպէս վարժապետը աշակերտներին: Պետրոսեան, Կիրակոսեան, առանց նեղութիւն քաշելու մինչև անգամ պարտաւորաւ աւելացնելու: Մի ուսուցչի կանգնում է և նախագահից խնդրում է խօսք երբեք բռնել ժամանակ: Այնպէս նախագահը յետ է դարձնում դուրսը և նայում պատի ժամացոյցին: Ուսուցիչը խօսում է, նախագահի ղեմքից ժպտալով է հեռանում: Յանկարծ նա կրկին «երեք օրով» վերջացաւ, բաւական է, նստեցէք: Իսկ ուսուցչի ձայնը կարում ու նստում է: Մի-թէ նախագահը չէ հանկանում որ չը յարգելով ժողովը, նա ինքն իրան էլ չէ յարգում:

Կատուեն և պէտք է անապահով ծառայող թիւի մէջ: Միացեալ-Նախագահներում, փոստային վարչութեան մէջ հաւաքողներին թուում, ամբերկական լրագիրների խօսքերով, կատուներ ևս կան, որոնց պարտաւորութիւնն է ծրարները պահպանել միջոցներից: Թէպէտ և այս չորրորդան

համարին, որտեղ որ գտնվում են հայ-կաթօլիկներ, հետաքրքրվեն նոցա մտաւոր վիճակով և մեր պարբերական հրատարակութեանց միջոցով, հրապարակ հանեն նոցա կեանքի երեւոյթները:

3-ը, Մեր դատաւական ուսուցչներն, որոնք ապրում են հայ-կաթօլիկների հետ խառն, եղբայրական յարաբերութիւն հաստատեն և բացառաւոր երկու կողմի ժողովրդի կրօնի խնդրը: 4-ը, ուսուցչից պարտաւոր լինի մանրամասնաբար ցույց տալու կրօնական հաւածանքների վատ հետեւանքները ընդհանրապէս, և 5-ը, կրօնի դաստառութեան պարտականութիւնը թողնել հայ-կաթօլիկ աշակերտի համար իրան բանաւային, եթէ չէ կարելի մի կամ երկու կամ աւելի աշակերտի համար կրօնուսուց քահանայ հրաւիրել վարժապետը, հարկաւոր համարվի կրօնի դաստառութեան ժամանակ, հայ-կաթօլիկները աղաւ լինեն գնալու իրանց քահանայի մօտ: Այս պարզ և բոլորովին առանց վնասի խնդիրները, մեր կարծիքով, եթէ ընդունվեն, կարող են հաշտեցնել երկու տարբեր կուսակցութիւնները, և զարգացական կեանքի միջնորդութեամբ, կարելի կը լինի պատրաստել լաւ ապագայ մեր հասարակական կեանքի մէջ: Այժման մասնկութիւնը մօտ օրերում կը լինի գործող տյծեր:

Կրօնական կուսակցութիւնները կարող են հաշտվել, միասնա գիտութեան տաճարի մէջ, այլ ոչ եկեղեցում: Կրօնական միութիւն յոստալը մի ազդի համար ցնորք է: Կրօնը մի անհատի, մի համայնքի, մի ազգի սրբազան իրաւունք է, որ չէ կարելի մի գիւղի, և ոչ խելք: Իսկ ուսումնարանը, միութեան տաճարն է, որ պէտք է բարոյապէս միացնել մեր մանուկներին ընդհանուր գաղափարով:

Թիֆլիս:

պահպանները պաշտօնական նշանակութիւն չունեն, այնու ամենայնիւ նրանք պաշտօնապէս ճանաչվում են, և նրանց թիւը մոցնվում է առանձին ցուցակների մէջ: Հէնց որ կատուներից մէկը մայր է դառնում, զլխաւոր դիրեկտորը պարտաւոր է տեղեկութիւն տալ այդ բանի մասին ում հարկն է, որովհետեւ ստիպված են աւելացնել կատուների բիւդժետը: Յրանալովում կատուները նոյնպիսի պատու ունեն և նոյնպիսի ծառայութեան համար իւրաքանչիւր օր ամեն մի կատուի համար 5 սանտիմ է նշանակված:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՑ

ՄՈՍԿՎԱ, 9 սեպտեմբեր: Կրեմլի պալատի մէջ կայարը և Կայսրուհին դուրս եկան Գեորգեան դահլիճը, որ լիքն էր մօսկվացիներով: Քաղաքագլուխը ասեց. «Քաղաւոր, Մոսկվան ուրախանում է, տեսնելով Ձեզ իր պատերի մէջ: Իւրաքանչիւր նոր տեսակցութիւնը նոր արտայայտութիւն է այն խոր կապի, որ միացնում է Քաղաւորին և ժողովուրդին: Այդ կապը Ձեր Մեծութեան համար ամենահաստատ նեցուկ կը լինի ներքին և արտաքին թշնամիների դէմ: Մոսկվայի կողմից բաղդաւորութիւն ունեւմ ներկայացնել Ձեր Մեծութեանը աղ և հաց»: Քաղաւորը բարեհաճեց ողորմաբար պատասխանել: «Ես բաղդաւոր եմ Մոսկվայի մէջ լինելով: Շնորհակալ եմ Ձեր ընդունելութեան համար»: Այդ խօսքերը բարձրաձայն օւրայով ծածկվեցան: Անցնելով միւս դահլիճները, որոնք լիքն էին ժողովրդով, կայսրը և Կայսրուհին կարմիր դուռնից ուղեորվեցին Ուսուցչական մայրեկեղեցին և Չուգով փառք: Այնուհետեւ նախաձաշեցին Նիկոլայեւսկի պալատի մէջ, որտեղից բաց կառքով ուղեորվեցին ինտաւատաները և 7 1/2 ժամին Պետրովսկի պալատի մէջ Բարձրագոյն ճաշ էր, որին հրաւիրված էին բարձր իշխանութիւն ունեցող անձինք:

ՇԱՏԻՆՍԿԱ, 9 սեպտեմբեր: Քաղաքային դուման որոշեց թաղապետութեան օրը յարգելու համար ծխական երկու ուսումնարաններ հիմնել:

ՐՈՍՏՈՎ (Գոնի վրա), 9 սեպտեմբեր: Հայրի վաճառատեղիի մէջ հանգստութիւնը շարունակվում է:

ՐԻԱԶԱՆ, 9 սեպտեմբեր: Այրված շոգեհաւի ճանապարհորդները բոլորն էլ աղաւածված են:

ԼՈՆԴՈՆ, 9 սեպտեմբեր: «Times» լրագիրը չէ կասկածում, որ խեղդիվ դեռ երկար ժամանակ պէտք է լինի անգլիական զօրքերի վրա: Լրագրի կարծիքով, անհրաժեշտ է Եգիպտոսի մէջ բաւականաչափ զօրքեր թողնել տեղացիների հակահրեթիւնը դէպի անգլիացիները զսպելու համար: Անգլիական հիւպատոս Մեքետ յայտնեց խեղդիլին, որ առանց Անգլիայի համաձայնութեան ապստամբութեան առաջնորդներից ոչ մէկին չէ կարելի մահաւանդել: Այսպէս կը լինի:

ԿՍՑԻՆ, 9 սեպտեմբեր: Արաբական թաղի մէջ ծագած անկարգութիւնների պատճառով Ուէլլէյ սպառնաց ուժեղանքներ քաղաքը, եթէ նոր անկարգութիւններ կը սկսվեն:

ՐՈՒՍԻԱՐԵՍ, 9 սեպտեմբեր: Ս. յօր Սիւայի մօտ բոլորական իշխանը կը տեսնվի լուսնական թաղաւորի հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 սեպտեմբեր: «Journal de St. Petersburg» լրագիրը հաղորդում է, թէ բոլոր մեծ պետութիւնները համաձայնութիւն յայտնեցին, որ նրանց ներկայացուցիչները Կ. Պոլսի մէջ հաւաքվին յոյն-թիւրքական սահմանական հարցը լուծելու համար: «Новое Время» լրագիրը

գիրը հաղորդում է, որ պատերազմական միջոցառումներն մեջ մի մասնաժողով է կազմված, որ պետք է քննե հոս-թիւր-քական պատերազմի ժամանակ խնդիր համար իսկական գնից 200—250 հազար ռուբլ աւելի ծախսելու գործը:

ՍԱՄԱՐԱ, 8 սեպտեմբերի: Սեպտեմբերի 6-ին շոգեհատով հասաւ այստեղ գեներալ Չերնիսով: Հաշի ժամանակ գեներալը մի ծառ արտասանեց, որի մէջ, չը ծանալով իրան վերաբերված ծառայութիւնները, կարելի է համարում պատուել իրան իբրեւ ընդ հոս մարդու:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 սեպտեմբերի: „Привит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, կայսրը և կայսրուհին Մեծ Իշխանների հետ աշտուղթեմբում հասան Մոսկովա ժամի 12-ին: Բաց կառքերով ուղևորվեցին իվերեան Աստուծամոր մատուռը և այնուհետև կրեմլի պալատը: Ժողովուրդը շատ ոգևորված էր: Ժամի 11½ Նրանք ուղևորվեցին Ուսպենսկի մայր եկեղեցին, իսկ այնտեղից Զուգով վանքը: „Голосъ“ լրագիրը հաղորդում է սեպտեմբերի 9-ից: Սեպտեմբերի 11-ին կայսրը և կայսրուհին կայսրիկն աշխարհանդէպը: Այդ օրը հասարակութիւնը մեծաք չի ունենայ: Պենիկ-գառն, որ յարձակվեցաւ Լանիի որդու վրա դատապարտված է բանտարկութեան երեք ամիս ժամանակով: Պատերազմական միջոցառումներն մէջ մի մասնաժողով կազմվեցաւ, որ պետք է քննե հոս-թիւր-քական պատերազմի ժամանակ խնդիր գնելու և նրա գործածելու գործը: Իսկական գնից աւելորդ ծախսերը 250,000 ռուբլ են համարում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ Թաւառորի և Թաւառու գալտեան պատճառով Մոսկովայի ոգևորութիւնը սնասհման է: Օրվայ 1½ ժամին Մոսկովայի քաղաքագլուխը մի ծառով ողջունեց Նորին Մեծութեանը ու աղ և հաց ներկայացրեց: Թաւառուրը բարեհաճեց ասել, որ Մոսկովայի այցելութիւնը իրան միշտ ուրախացնում է և շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան համար: Այսօր Բարձր Անձինք տեղափոխվեցան Պետրովսկի պալատը: Ժողովուրդը անգագար ոգևորված աղաղակում էր: Ամեն տեղ ընդհանուր ուրախութիւն է տիրում: Գերմանական լրագիրները հաղորդում են, որ սենատոր Մանասէյին այլ ևս չի վերադառնայ Բալտեան նահանգներին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 սեպտեմբերի: Պետական բանկի 50% տոմսակր առաջին շրջանի արժէ 95 ռ., երկրորդ 91 ռ. 25 կ., երրորդ 91 ռ. 5 կ., չորրորդ 90 ռ. 25½ կ., հինգերորդ 90 ռ. 5 կ.: Ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 214 ռ. 50 կ., երկրորդ 208 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 89 ռ. 87½ կ., երկրորդ 90 ռ., երրորդ 90 ռ., չորս 71½ կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,25 պէնս, հոսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 205 մարկ 37 պֆ., ֆրանկի վրա 253 ֆրանկ 75 սանտիմ: Բօրսայի արամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յանձնուեցաւ մամուլին մեր

„ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՅԻՉ“ ԵՐԿՐՈՐԻ

ՏԱՐՈՒՄՑ ԴԱՍԱԳԻՐՔԸ

Եւ լոյս կը տեսնի մինչև ամիս վերջը:

Յ. Նազարեանց

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ԳՐԻՈՅԿ

„ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ“

ԵՐԳԵՐ, ՈՏԱՆԱՌՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

Ընթերցասէր մանուկների համար

ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

ԳՐԵՑ Դ. ԱՂԱՅԱՆՑ

Վաճառվում է Վ. Շահվերդեանի Լրագրական խանութում: Գինն է 20 կօպ. օտար տեղերից դիմում են հետևեալ հասցեով: Тифлисъ, въ газетное Агентство В. Шавердова.

24—25

ԼԵՕՆԻԴ ՖԵՕԴՈՐՈՎԻՉ ԿՆԻՆԱ

Հասաւ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի հրաւերով և յայտնում է, որ բացի իր պարապմունքներից ուսումնարանին մէջ նա մասնաւոր ԴԱՍԵՐ կը տալ պիանոի վրա ածելու համար թէ իր ՏԱՆԸ և թէ տանից ԴՈՒՐՍ: Ընդունում է սկսող երեխաներին, նոյնպէս և ԲԱՐՋՐ ԿՐԹՈՒԹԵԱՆ համար: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել ամեն օր 1—3 ժամը Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի մէջ: ԳՐԻՖՈՅԵՐՈՎՍԿԱՅԱՍ փողոց (Նախկին Կամենդատսկայա) տուն ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՕՎ Ի № 6:

(Ե. հ. շ.) 12—12

ԹԵՅ առաջին հունձի այս տարի չափազանց զոյնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՈՆԳՈ թէյ 1 ռ.—1 ռ. 20 կօպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ռ. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ռ. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՆԻ թէյ 1 ռ. 80 կ. և ամենալաւ ֆուռ-չու-ֆու թէյ 2 ռ. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօշաղջ ֆրայ, Շեփիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՌԻ, ԲԵՎՈՂԱԿՆԵՐ ՎԵՐԼԻ, ԹԱՄԲԵՐ Բարձրերի, Կոլմանի նըշըշտայ, ԱԼՖՕՄԵՆ Զփաղցի կէս գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ, ԹԻՖԼԻՍԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՑՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:

40—100

ԹՈՒՐԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

սիստեմատիքական ընթացք

Գրիգորի վարձելան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար մասն առաջին (ամբողջ թուեր) Մամուլի տալիս է և սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ):

Գինն է 40 կօպ.

Ուսումնարաններին զիջումն 20%:

Ծախվում է Վ. Շահվերդեանի Լրագրական գործակալութեան խանութում:

Օտար տեղերից դիմում են այս հասցեով: Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

ՇԱԲԱԹ ՕՐ

ԹՈՂԵԼՈՎ ԹԻՖԼԻՍԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ

տեղը ծախվում է իր ՀՈՂԵՐԸ Նաբերեժնայ և Միխայ-լովսկայա փողոցների վրա, գրաֆիկներ 25 կ., ալբոմներ կիսագնով և այլն:

12—15

Սեպտեմբերի 11-ին, Արծրունու թատրոնում

ՕՐԻՈՐԴ Հ. ՂՈՐԱՆԵԱՆ

Կօնցերտ կը տալ, մասնակցութեամբ պ. Գ. Ղորանեանի: Տոմսակները կարելի ստանալ պ. Լանկօի մօտ:

ՕՐԵՍՍԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ թոյլտուութեամբ Կ. Կ. Բասօէի ԷՅԿԱԼԻՊՏԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ Էլէկտր շատ լաւ միջոց է առաւելների և ընդերքների ցաւի դէմ, նոյնպէս և ցաւի առաջն առնող միջոց:

Ատամային ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՇԻՆԵՐ կարմիր, սպիտակ և սև խինայի:

ԷՅԿԱԼԻՊՏԻՆ մաքրող ՀԵՂՈՒԿ սենեակների և հիւանդների բնակարանները մաքրելու համար և այլն և այլն:

Ամբողջ կովկասի համար գլխաւոր պահեստ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹ Թիֆլիսի մէջ (Кавказское товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисе).

(Ե. և շ.) 4—4

ՕՐՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄՍԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

„Փուրնայ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱԿ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիենայում դիմելով հետևեալ հասարակ հասցեով: Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ Օ լ Ի չ Ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ Ի լ ը Ն 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենայն տեսակի, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՌՆԵՐ 8—30 ռ., չափազանց 250—25 ռ., սակվոյժներ 1. 30—12 ռ., սոսկ գոռ կն եր ծանապարհի 6—35 ռ., մարաններ (погребы) 6—25 ռ., սա մօ վա ր ն եր 60 կ.—1.25 ֆունտը, կուխոնի պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ համով ամաններ. ու մի վա լ ն կ ն եր մ ր ա մօ ր ն ի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լույսի 6—32 ռ., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պատրոններ. (գուլաններ) ըէվոլվէրի, սիգար Ռէնգարդի ֆարրիկից. պապիրոս և թամբաքու կոշնարովի գրիլի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԻՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (սովորա չայու և կաֆէի) Լինէմի. Կօֆէ Լինէմի և Միլեյսմի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 կ. հայկիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրոբկայ գինեկաճառների, հանքային և դարձրի (для водных ванн) զուլթուկ (пучки), պարսկական սամուգարի և չայու, դանակ շանգալ գանազան ֆարրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժինը. գրչակոթներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դանակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուխոնի 1—40 միւն. և 3—20 կ. պրիբոր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ու թոններ, Բրիտանիայի չայնիկներ, կաֆէի-նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆրիտեր—չուր մաքրելու, կրակմալ կարթիկ 18 կ., փաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փողար, կանկերտներ, սուրբուշ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարտատիտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպայիներ, գրչաներ սեղանի և չայու ֆրամէ, վարչակի և բրիտանիկ դուժինը 1—50 կ. միւն. և 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չու-միլէթ 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուխտ, պոր-սպոչկաններ վարչակու, ՌԵՋԻՆԻ ԿԱԼՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գնախիկներ 35 կ.—4—50 կ., հատ, սնձրեւի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուլուպերովի և փայտէ, շոտկաններ գլխի, շոքի, սապոկի, պոյի և կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատուի կօճի և շալէ (парусы) ֆէլ-չատիէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերիկի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտավետ ջրեր, պուզրա, Գլիցերին ջրի քաջակ, հոտավետ պարաշոկներ ԿՐԼԵՐԻ ԼԱՐՈՍՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցեով: Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

132—180

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ Օ լ Ի չ Ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ Ի լ ը Ն 13.